



Ք Ս Ս Ն Ե Օ Թ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

ՄԱՅԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

Հ ի Մ Ն Ա Ւ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

Երկաթուղի դէպի Պարսից ծոցը.—ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մարդասպաններ. Նամակ
Վաղարշապէս. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիֆլիսյան. Նամակներ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒԱՅԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Խնդիրների շուրջը. Ժայռը:

ԵՐԿԱԹՈՒՂԻ ԴԵՊԻ ՊԱՐՏԻՑ ԾՈՅԸ

«Մշակի» երէկվայ համարում մենք հա-
ղորդեցինք Բերլինի «Berliner Local An-
zeiger» լրագրի թղթակցի խօսակցութեան
համառոտութիւնը Պետերբուրգի պարսից
դեսպան Միքայիլ-Ռիդար-Խանի հետ: Դես-
պանը ոչ միայն չէ հերքում այն լուրը
թէ Ռուսաստանի կապիտալիստների կող-
մից առաջարկութիւն կայ Կասպից ծոցը
միացնել երկաթուղու միջոցով Պարսից ծո-
ցի հետ, այլ և հաստատեց այդ լուրը
յիշեցնելով, որ նոյնանման դիտաւորու-
թիւններ գոյութիւն ունեն երեսուն տա-
րուց ի վեր և որ այդպիսի մի երկաթու-
ղի չէ կարող առիթ լինել քաղաքական
որ և է բարդութիւնների, որովհետեւ ձեռ-
նարկութիւնը ունի զուտ տնտեսական և
կուլտուրական նպատակներ: Երկաթուղին
կանցնի պարսկական պետութեան միջով,
կապելով Ռուսաստանը և Եւրոպան Հնդկ-
ական ովկիանոսի հարուստ ծովափնայ
երկրների հետ:

Այսպիսով մի կողմ թողնենք քա-
ղաքական տեսակետները, որոնք անշուշտ
նայնպէս իրանց նշանակութիւնն ունեն
այդպիսի խոշոր ձեռնարկութիւնների մէջ,
այլ աչքի առնենք միայն տնտեսական և
կուլտուրական կողմերը, պէտք է խոստո-
ւանենք, որ պարսկական այդ երկաթու-
ղուն վերապահված է ահագին մի դեր
թէ ապրանքների փոխանակութեան և թէ
հաղորդակցութիւնների դուրացման գոր-
ծում Հնդկաստանի և առհասարակ հա-
րաւի ապրանքները կը գտնեն իրանց շարժ-
ման համար նոր և կարճ ճանապարհ,
մի և նոյն ժամանակ Ռուսաստանի ար-
դիւնագործութեան առարկաների մի մասը:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Խ Ն Գ Ի Ր Ն Ե Ր Ի Շ Ո Ւ Ր Զ Ը

(Նամակներ Թաւրիզէն)

Կ ե ն տ ր օ ն ա կ ա ն ու ա ու մ ն ար ա ն ը

Միթէ ձեզ համար օրինաւոր դարձը կեն-
տրօնականից փոքր և պակաս կարևոր դարձ է.
փոխանակ կամենալու զեկալարել այնպիսի մի
մեծ գործ, որի պատասխանատուութիւնը շատ
մեծ է, միջնակարգ օրինաւոր ուսումնարանի
համար խորհեցէ՛ք, ձեր խնամակալութեան տակ
գտնվող արձնատանոցը աւելի լաւ հիմունքների
վրա դրէ՛ք մի քանի մասեր աւելացնելով: Մի-
թէ կարուձնով ու գորգագործութիւնով (փակա-
գծում ասենք, որ վերջինս աւելորդ է) ամեն
բան վերացաւ: Միթէ այս խնդր ու աղքատ հա-
տարակութեանը, որին դուք գովելի եռանդով
խնամք էք տանում, հարկաւոր են միայն շոր
ձեռնոցներ ու կարողներ: Հապա որ տեղացիները
չը գիտեն երկերը, լուսնալը, ուտելը և մինչև իսկ
շնորհով կարկանտ անելը: Ինչ էք կարծում,
աւելի լաւ չէք անի այս ճիւղերը աւելացնէ՞ք
ձեր արձնատանոցին: Սկէք, համաձայնվեցէ՛ք, որ
դուք սրանով անհամեմատ աւելի օգտակար
կը լինէք, քան կենտրոնական ուսումնարանի ղե-
կավարը լինելով, ուսումնարան, որ պիտի լինի
ձեռնակաւ կամ 6-ամեայ կուրսով, տարրական
վարժարանների շարունակութիւնը, 6—7 ա-
մեայ կուրսով, ապագայում էլ պէտք է ու-

և մանաւանդ նաւթի համար կը բացվի
ընդարձակ շուկայ, որից նա այժմ դուրկ
է: Իսկ երկաթուղու ուղղութեամբ գտնվող
պարսկական հողերը, որոնք քնել են ամ-
բողջ դարեր և մատնվել անշարժութեան,
կը սկսեն արթնանալ և զարգացնել թէ
գիւղատնտեսական և թէ գործարանական
գործունէութիւն:

Այդպիսի մի երկաթուղու շնորհիւ բա-
ւական կը կերպարանափոխվի Կասպից ծո-
ցը, որ առաջ միայն ներքին մեծ լճի դեր
էր կատարում և աւելի նշանակութիւն
ստացաւ միայն այն օրից, երբ սկսվեց
նաւթի մեծ քանակութեամբ տեղափո-
խութիւնը դէպի Վոլգայի ափերը: Կաս-
պից ծովը իր արեւմտեան և հարաւային
հարուստ ծովափերով կապված Հնդկա-
կան Ովկիանոսի հետ՝ կը ստանայ տնտե-
սական ընդարձակ մի նշանակութիւն և
կը դառնայ առևտրի և արդիւնագործու-
թեան խոշոր կենտրոնակայաններից մէկը:

Սակայն այդպիսի մի երկաթուղու գիծ
իրագործելու համար հարկաւոր են նա-
խաձեռնող ոյժեր, որոնք ունենալին ձեռ-
նարկու ողի, կարողանալին կազմակերպել
լուրջ ընկերութիւն, ձեռք բերել անհրա-
ժեշտ գրամագուլթը և տեղիւնութեամբ ու
համակցութեամբ առաջ աննէլին գործը, որ
անկախած մեծ գծուարութիւնների կը
հանդիպի Պարսկաստանի անապատներում:

Այդպիսի մի երկաթուղուց Անդրկով-
կասը կուճնայ անկասկած մեծ օգուտ-
ներ, որը նոյնպէս մտել է լայն արդիւնա-
գործութեան և համաշխարհային փոխա-
նակութեան շրջանի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մի շարք տարիներ տնտեսական ծանր տա-
ղանքներ կրելուց յետոյ Անդրկովկասը այժմ, երբ
գարուն է, երբ որոշվում է երկրագործ ազգա-
քանակութեան արտոյժ բախտը, չէ կարող մի ա-
ռանձին ուրախութիւն զգալ մօտիկ ապագայի
վերաբերմամբ. մենք մի բաւական տխուր տղե-
տեսական տարվայ սկզբում ենք կանգնած:
Դեռ անցեալ տարվայ այնպէս, եթէ յիշում են

նենայ մի քանի մասնաճիւղեր՝ տարրական-
բժշկական, մանկավարժական և այլն: Ին-
չու այնպիսի մի ծանրութիւն վերցնել, որի
կռի տակ կարելի է ճնշվել: Ինչու չընդարձա-
կել ձեր խնամակալութեան տակ գտնվող ման-
կական պարտէլը: Ինչու աւելի ուշք չը դար-
ձնել մանկական պարտէլի ընդարձակելու վրա՝
հրաւիրելով մի երկրորդ վարժուհի ևս, որպէս զի
ստիպված չը լինէք մերժել ձեզ դիմող մանուկ-
ներին, որոնք տանը մնալով՝ դուք էլ գիտէք,
թէ յետոյ ինչ են դառնում:

Որքան ծառայութիւն արած կը լինէր ըն-
կերութիւնը, եթէ հնարաւորութիւն ունենար
չը մերժելու ոչ մի մանուկի, և սրանք ապա-
գայում ինչպէս երախտագէտ կը լինէին: Մտե՛ք
դասարան, և դուք իսկոյն կարող էք ասել, որ
այս ինչը մանկական պարտէլի երեխայ է, այս
ինչը ոչ: Առաջինը իսկոյն աչքի է ընկնում իր
կրթութիւնով, իր մաքրութիւնով, քաղաքավարի
ու մարդավայել ձևերով, իր հասկացողութիւնով:
Իսկ երկրորդը... քայքայ ինչով է մեղաւոր սա,
ինչու համար նա պիտի տուժէ. չէ որ նա սո-
վորում է լսածը և ամուժ տեսածը: Լօգիկական
եղբակացութիւնն է, որ մեղաւորը ծնողներն
են: Ի հարկէ: Բայց սա ինչ մեղք ունի. չէ որ
մենք ի նկատի պիտի ունենանք միջավայրը,
ուր մեծացել, կրթվել են սրանք: Սեղ է մի
այլ ֆակտոր, որ հակադրէր միջավայրին. և ո՞վ
պէտք էր ստեղծէր՝ խաղիկական-տիրացու-
կան ուսումնարանը, թէ պարսկական կուլտու-
րան: Պէտք է հեռացնել երեխաներին ծնողնե-
րից և մի այլ չըջանում դնել. այս գիտէ յար-
գելի վարչութիւնն էլ, գիտէ նոյնպէս, որ դրա-

մեր ընթերցողները, շատ տեղերից դանդա-
ղում էին չոր եղանակների վրա: Նոյն դա-
նանքը չարանակվեցին և ձեռք, իսկ ներ-
կայ դարնան երգչու թիւեր համարեա ընդհա-
նուր մի աղէտ դարձաւ մեր երկրում: Թիֆլիսի
«Кавказское Сельское Хозяйство» շաբաթաթերթը
հետեւալ հաշիւն է ներկայացնում.

Նոր մտած գիւղատնտեսական տարին քիչ
միջիթարական բան է խոստանում. անձրե-
ների բացակայութիւնը և սաստիկ տաքերը
շատ տեղերում վերջնականապէս փչացրին
այնպէս, որ թող չը տուին ժամանա-
կին զարնանացանք անել. համեմատաբար
ցուրտ ու տաք ձմեռվանից յետոյ խոտը դեռ
չէր կարողացել երևան գալ, երբ չոր ու տաք
գարունը չը թողեց հասակ քաշել և խոտը
յետոյ այրվեց: Դեռ յունվարին և փետրվարին
աղբաբերութիւնը երկրագոյլ էր նայում իր
չոր դաշտերին: Այս քանի տեղերին անձրե-
քըրտիւն չը դիպաւ: 9 ամիսների ընթացքում:

Աւելի վճռական ամիսն է մարտը, որ, սա-
կայն, աւելի անբարեխաղ էր:

Երգչութիւնը տեղի ունեցաւ հաջաւոր
տեղերի մեծ մասում. մի քանի տեղ, օրինակ
Ներսիսեան համալսարան, ինչպէս հաղորդում
են թղթակցները, աղբիւրները ցամաքեցին,
չորը այնքան քիչ էր, որ եթէ բոլորը հա-
ւաքվէր, դարձեալ չէր կարելի ուղղել դաշ-
տերի նոյն իսկ կէտը: Եթէ այդ բոլորին ա-
ւելացնենք և այն, որ զարնանք համարեա
ամեն տեղ քամիներ էին փչում և սաստիկ
տաք էր, պարզ կը լինի, որ օդերկոյթաբա-
նական տեսակէտից ներկայ տարին մեծ յոյ-
սեր չէ ներշնչում:

«Մշակի» մէջ տպված քաղաքախոս թղթակ-
ցութիւններն էլ նոյնն են վկայում: Շաբաթա-
թերթը աւելացնում է, որ ապրիլի կէտից համա-
րեա ամեն տեղ անձրեւներ եկան: Եթէ այդ հան-
գամանքը այդքան չը նպաստէ երկրագործու-
թեան, որ ստրկալ տարրա գոյս սրջակ բերք
տուող համարի, այն ժամանակ մեր առաջ
այժմից իսկ բացված կը լինի մի յուսահատա-
կան հեռանկար. պարբերական թանգութիւն-
ներից արդէն ուժասպառ դարձած աղբաբե-
րութիւնը երկարված կը լինի աւելի մեծ փոր-
ձանքի, իր առջև ունենալով անբերրութեան մի
ամբողջ տարի: Այժմեանից մենք չենք ուզում
դուշակել այդ աղէտի չափերը: Ամբողջ սրտից կը
ցանկանայինք, որ Անդրկովկասի վրա կրկնված
տաքնապաղ անցնէր և երկիրը ունենար իր պի-
տոյքները համար բաւարար բերք:

նով մի բարիք, մի զգալի ծառայութիւն արած
կը լինի հասարակութեան. և ինչու չանել այս,
միթէ սա պակաս անհրաժեշտ է: Եթէ ընկերու-
թիւնը կարող է կենտրոնական ուսումնարանի
հարցով զբաղվել, պէտք է կարծել, որ նա ա-
ւելի լաւ ու ձեռնհաս կերպով—ի հարկէ վա-
րժուհի հետ խորհրդակցելով—կարող կը լինի
իր խնամքին յանձնված մանուկների կրթական
հիմնարկութիւնը ընդարձակելով զբաղվել, և
ստիպված չի լինի մերժել շատերին տեղ չը
լինելու պատճառով: Այսպիսով նա հնարաւո-
րութիւն կունենայ աւելի թուով մանուկներ իր
խնամակալութեան տակ առնելու և բարե-
կրթելու նրանց, մեր թշուառ հասարակութեան
այդ ապագայ անդամներին: Որտեղ է ընկե-
րութիւնը գործ վնասում, ուր է գնում նա,
սա իրան աւելի մօտ չէ:

Թաւրիզի կանանց բարեգործական ընկերու-
թիւնը նպատակ է դրել նոյնպէս օգնել նրանց,
որոնք կուղենան վարժուհիութեան պատրաստվել,
այլ և մի կին-բժիշկ հրաւիրել: Թողնենք առա-
ջին կէտը. դրան հասնելու համար պէտք է լու-
ծել օրինաւոր միջնակարգ ուսումնարանի խն-
դիրը: Այժմեան մեր օրինաւոր հնգամեայ ու-
սումնարանները չեն կարող տալ այդ պաշտօնի
համար պատրաստվող օրինաւորներ: Բայց մենք
վարժուհիների մեծ կարիք ունենք: Մինչև այժմ
էլ պարսկական լիցիւններ վարժուհի տուող
է: Վարժուհի մեծ պահանջ կայ, մինչև չաւ
քիչ կովկասցի օրինաւորներ են համաձայնվում
այս միջոցառումը գործելու: Ինչ անել, ինչպէս
դարձանել այդ պակասը, ինչպէս լուծել հար-
ցը: Միակ լուծողը կարող է լինել, ինչպէս քիչ

Շատ հասկանալի հոգեբանական երևոյթ է,
որ Նուբար-փաշայի մահից յետոյ արեւմտեան
հայերը մի մեծ կտակի ակնկալութիւն ունէին:
Լրագիրներում բաւական մեծադրոյդ գովա-
սանքներով աւելի ևս մեծադրոյթ թուանշա-
նեք հրատարակեցան: Ներկայումս հոգեկամ
միտիւտը, ասում էին, թողել է 100 միլիոն
ֆրանկից աւել կարողութիւն, որից 3 միլիոնը
կտակված է ազգին. նոյն-իսկ ցոյց էին տալիս,
թէ որտեղ է պահված հանգուցեալի կտակը:
Բայց յանկարծ... հիստափոխում: Նուբարը ոչինչ
կտակ չէ թողել: Հանգամանք ինքն ըստ ին-
քեան պերճախօս էր. բայց Կ. Պոլսի պնակա-
ւէզները, որոնք, ինչպէս յայտնի է, աշխարհիս
վրա միայն ուրիշ տուած տուրքն են համա-
րում ամեն մի արժանաւորութեան չափ, սկը-
սեցին աւելի և աւելի արժարժել այն հարցը,
թէ ինչու Նուբարը ազգի բարեբար չէ հանդի-
սացել իր մահից յետոյ: Միւսները աշխատում
են պաշտպանել հանգուցեալի յիշատակը, բայց
պաշտպանութիւնն էլ մեղադրանքի չափ արժեք
ունի: Արդար կը լինէր ասել, որ Նուբար-փա-
շան կտակ չը թողեց այն պատճառով, որ այդ-
պէս կամեցաւ: Փիչ հարուստներ կան, որոնք
կտակ չեն թողնում: Ինչու այս պարզ իրողու-
թիւնը չեն առաջ բերում: Պատճառն այն է,
որ չեն ուզում մի և նոյն ժամանակ զրկել Նու-
բար-փաշային ազգասէրի և ազգային բարեբա-
րի տխուրոյցի: Եւ ասանաւոր են բերում այն,
որ Նուբարը Կ. Պոլսի Շահադարեան դպրոցին
մօտ 10 հազար ռուբլի է նուիրել, զրքեր է
տուադրել տուել, օգնել է Եւրոպայի հայ ու-
սանդիւններին և մի քանի խմբագիրներին: Կա-
սեն թէ դա քիչ է 100 միլիոն կարողութիւն
ունեցողի համար: Այդ հանգամանքն էլ մեղ-
ք է իւր իւր համար: Եւ ասանաւոր են բերում այն,
որ Նուբարը չըբացաւ, սկսեցին ինչեցինք Նուբար-
փաշայի հարստութեան չափն էլ և այժմ ասում
են, թէ նա միայն 150,000 ոսկու արծողու-
թեամբ կալուածներ է թողել: Ինչ և ինչ, Վե-
նետիկի «Բազմալէզը» խրատում է ծուռ մըտ-
քը չանել Նուբար-փաշայի մասին: Նա խոս-
տովանում է, որ 3 միլիոն ֆրանկի կտակը
չը կայ:

Այսօր անսխալ աղբիւրէն կը տեղեկանանք,
թէ յարգ, հանգուցեալ հայ Մերուսին աղբիւր
այդպիսի անուսանալի նուէր մը թողու հա-
ճոյք չէ զգացած. և այս անշուշտ իրագոր-
ծում մ'է իւր «Քէն» պու միլիոնէ բխումը:

վերև նկատեցինք, միջնակարգ օրինաւորական ու-
սումնարանի բացումը: Ինչ տեսակէտից էլ վեր-
ցնելու լինենք այս խնդիրը, նրա դոյրութիւնը
մի անհրաժեշտ պահանջ է մեր թէ հասարա-
կական, թէ ընտանեկան կեանքի համար: Անա
թէ ուր պէտք է կենտրոնացնել կանանց բնիկ-
րութիւնը իր ոյժը, անա թէ ուր պէտք է գործ
դնէ ամեն աշխատանք, ամեն քրտինք: Սա կա-
րող է լինել ընկերութեան պարծանքը:

Այն-բժշկի խնդիրն էլ ոչ պակաս առաջնա-
կարգ է պարսկական շաբաթ: Ա՛յ, ընկերու-
թիւնը ինչ մեծ ծառայութիւն արած կը լինէր
ժողովրդին: Փանի-քանի կանայք են մեռնում կամ
տանջվում զանազան հիւանդութիւններից, ու-
րովհետեւ կին լինելով, քաջվում են դիմել տղա-
մարդ բժշկին: Շատ կարեւոր դեր ունի կին-
բժիշկը մեր այս մոռացված պահանջում, նա
չստ հոգիներ կազատէր: Մեր տառնէրների
դոշերը բաւական են ապացուցանելու կին-բը-
ժշկի անհրաժեշտութիւնը: Դռնէ հրաւիրէին մի
մանկաբարձուհի: Երբ առջիկ ընկած են հա-
րիրաւոր թշուառներ, որոնք զոհ են գնում թէ
իրանց և թէ չըբաւատի տգիտութեան, դու էլ
հնարաւորութիւն ունես նրանց ազատելու, ինչ
տարբերակ ձգտում է թողնել ու վաղել այն-
պիսի մի գործի ետեւից, որի մասին ամբողջ մի
երկիր պէտք է աշխատէ: Ո՞վ գիտէ, մարդկա-
յին թուրութիւն է, գուցէ յարգելի տիկիները
ուզում են անպատճառ մեծ գործ կատարած
լինել: Բայց այդ դէպքում թող մի հիւանդանոց
հիմնեն: Եւ ինչ փառաւոր արձան կարող է
լինել այս գործը: Սրանով բազմաթիւ մանուկ-
ներ, երկու սեռի պատանիներ, մայրեր ու հայ-

1919

Типографія Грузинск. Издат. Т.—ва Орбелиановская ул., № 27.